ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1961 Общественные науки

Ս. Հ. Մովսիսյան

ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՆՅՈՒԹԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶՄՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՌԱՋԻԿԱ 20 ՏԱՐՈՒՄ

Կոմունիստական հասարակարգի կառուցումը դարձել է սովետական ժողովրդի անմիջական պրակտիկ խնդիրը։ Պատմական այդ վիթխարի խնդրի լուծումը ընդգրկում է սովետական մարդկանց կյանքի բոլոր բնագավառները։ Տնտեսական բնագավառում այն հանգում է կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը։

«Պարտիայի և սովետական ժողովրդի գլխավոր տնտեսական խնդիրը այն է,—ասված է ՍՄԿՊ նոր Ծրագրի նախագծում,—որպեսզի երկու տասնամյակի ընթացքում ստեղծվի կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան»։

Մոտակա 10 տարում (1961—1970 թվականներին) նախատեսվում է արդյունաբերական արտադրանքի ծավալը ավելացնել մոտավորապես երկու և կես անգամ և գերազանցել կապիտալիստական աշխարհի առավել հզոր ու հարուստ երկրի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների արդյունաբերական արտադրության արդի մակարդակը։

20 տարում, մինչև 1980 թվականը, արդյունաբերական արտադրանքը կավելանա ավելի քան վեց անգամ։ Սովետական Միությունը շատ ավելի առաջ կանցնի Ամերիկայի Միացյալ Նահանգների արդյունաբերական արտադրանքի ներկայիս ընդհանուր ծավալից։

Դրա շնորհիվ Սովետական Միությունը կունենա իրենց հզորությամբ չտեսնված արտադրողական ուժեր և աշխարհում կգրավի առաջին տեղը բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող արտադրանքի արտադրությամբ։

Կոմունիստական պարտիան այսուհետև ևս հոգ կտանի ծանր ինդուստրիայի զարգացման մասին, որը ժողովրդական տնտեսության բոլոր մյուս ճյուղերի տեխնիկական վերազինման հիմքն է, ապահովում է երկրի արտադրողական ուժերի զարգացումը և պաշտպանունակությունը։

Ծրագրում նախատեսվում է այսուհետև ևս ապահովել էլեկտրաէներգիայի արտադրության առաջընթաց տեմպերը, ելնելով այն բանից, որ էլեկտրիֆիկացիան կոմունիստական հասարակարգի Լկոնոմիկայի շինարարության առանցքն է։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը 20 տարվա ընթացքում ներկայիս մակարդակի համեմատությամբ կավելանա մոտավորապես 9 անգամ։ Կծավալվի ատոմային էլեկտրակայանների շինարարությունը, կստեղծվի ՍՍՌՄ-ի միասնական էներգետիկ սիստեմ։ Հիմնականում կկենսագործվի Վ. Ի. Լենինի հանճարեղ գաղափարը ամբողջ երկրի էլեկտրիֆիկացման մասին։

Արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը կուղեկցվեն նրա կառուցվածքում տեղի ունեցող խոշոր պրոգրեսիվ տեղաշարժերով։ Հատկապես կբարձրանա այն ճյուղերի դերը, որոնք ապահովում են առավել մեծ տեխ-

նիկական պրոգրես։ Վառելիքի և էներգետիկայի, հումքի և նյութերի սակավ արդյունավետ տեսակները աստիճանաբար կփոխարինվեն ավելի արդյունավետ տեսակներով։ Խիստ կավելանա սինթետիկ արտադրանքների տեսակարար կշիռը։ Կստեղծվեն արհեստական նոր նյութեր, որոնց նմանը չկա բնության մեջ, դրանք օժտելով անհրաժեշտ հատկություններով և տեխնիկական բնութագրությամբ։

Անշեղորեն կաճի մետաղի և վառելիքի արտադրությունը։ 1980 թվականին սև մետալուրգիան կհասնի այնպիսի մակարդակի, որը հնարավորություն կտա տարեկան ձուլել մոտավորապես 250 միլիոն տոննա պողպատ։ Առանձնապես կաճի թեթև, գունավոր և հազվագյուտ մետաղների թողարկումը, նոր հատկություններով օժտված համաձուլվածքների արտադրությունը։

Ինչպես հայտնի է, արդի քիմիայի նվաճումները հսկայական չափով ընդլայնում են ժողովրդական հարստության աճման հնարավորությունները, ապահովում նոր, ավելի կատարյալ ու էժան արտադրամիջոցների և ժողովրդական սպառման առարկաների թողարկումը։ Ուստի նախատեսվում է ամեն կերպ զարգացնել քիմիական արդյունաբերությունը և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում լայնորեն կիրառել քիմիական նոր արտադրանքներ. տնտեսաբեր և բոլոր տեսակետներից ավելի արդյունավետ սինթետիկ նյութերը գնալով ավելի մեծ չափով կփոխարինեն մետաղին, փայտին և շինարարական այլ նյութերին։

Մեքենաշինությունը, որն առաջնակարգ նշանակություն ունի ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման համար, կաճի արագ տեմպերով և լիովին կապահովի երկրի կարիքները ժամանակակից մեքենաների, հաստոցների և ապարատուրայի բոլոր տեսակներով։ Ամեն կերպ կընդլայնվի ավտոմատ գծերի ու մեքենաների, ավտոմատիկայի միջոցների, տելեմեխանիկայի և էլեկտրոնիկայի միջոցների, ճշգրիտ սարքերի թողարկումը։

Շինարարական ինդուստրիան կզարգանա և կհասնի այնպիսի մակարդակի, որը հնարավորություն կտա նրան լիովին ապահովել 20-ամյա պլանով նախատեսվող կապիտալ շինարարության հսկայական մասշտաբները։

Պարտիայի նոր Ծրագրի նախագծում նախատեսվում է ժողովրդական սպառման առարկաների արտադրության արագ աճ։ Թեթև և սննդի արդյունաբերության բոլոր ճյուղերի ընդարձակման հետ միաժամանակ կբարձրանա ժողովրդական սպառման առարկաների բաժինը ծանր ինդուստրիայի արտադրանքի մեջ։ Ամբողջ արդյունաբերության աճող հնարավորությունները գնալով ավելի մեծ չափով ի սպաս կդրվեն ժողովրդի պահանջների բազմակողմանի բավարարմանը։

Նյութական բարիքների արտադրությունը կոմունիզմի կառուցման համար անհրաժեշտ մասշտաբներով ապահովելու համար բավական չէ միայն սոսկ քանակապես ավելացնել արտադրական կարողությունները։ Վճռական նշանակություն կունենան բուն արտադրության բնույթում կատարվող որակական փոփոխությունները, որոնք հանգում են հետևյալին.

Երկրի համատարած էլեկտրիֆիկացման և էներգոզինվածության աճի, ինչպես նաև մեքենաշինության և ավտոմատացման միջոցների արտադրության արագ աճման հիման վրա գնալով ավելի մեծ չափով կարմատավորվի կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության մեջ և տրանսպորտում։

Նախատեսվում է 20-ամյակի ընթացքում մասսայական մասշտաբով իրագործել արտադրության կոմպլեքսային ավտոմատացումը, գնալով ավելի մեծ չափով անցնելով ավտոմատ ցեխերի ու ձեռնարկությունների։ Լայն կիրառում կստանան կիբերնետիկան, էլեկտրոնային հաշվիչ-վճռող և կառավարող սարքերը։

Ավտոմատացումը և կոմպլեքսային մեքենայացումը, որոնք սոցիալիստական աշխատանքը աստիճանաբար կոմունիստական աշխատանքի վերաճելու նյութական հիմքն են, հնարավորություն կտան 20 տարում աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության մեջ բարձրացնել չորսից մինչև չորս ու կես անգամ և դերազանցել ԱՄՆ-ում եղած աշխատանքի արտադրողականության ներկայիս մակարդակը մոտավորապես երկու անգամ։

Պարտիան ամեն կերպ կնպաստի գիտա-տեխնիկական պրոգրեսի առավելագույն արագացմանը, բոլոր ճյուղերի տեխնոլոգիայի և արտադրության տեսակների մշտական կատարելագործմանը, գիտության դերի հետագա ուժեղացմանը կոմունիստական հասարակարգի շինարարության ասպարեզում։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում առաջնակարգ նշանակություն են ստանում արտադրության առավել ճիշտ կազմակերպման ու վարման հարցերը։

Հասարակական աշխատանքը ռացիոնալ կազմակերպելու և տեխնիկական պրոգրեսի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով նախատեսվում է զարգացնել ձեռնարկությունների մասնագիտացումն ու կոոպերացումը։

Պետք է ապահովվի աշխատանքի կազմակերպման ավելի բարձր աստիճան, թույլ չտրվեն աշխատանքային ժամանակի կորուստներ, ապահովվեն աշխատանքի արտադրողականության աճման ավելի բարձր տեմպեր՝ աշխատանքի վարձատրության համեմատությամբ, անշեղորեն իջեցվի արտադրանքի ինքնարժեքը, արմատավորվի տնտեսական հաշվարկը արտադրության բոլոր օղակներում։ Տեխնիկական պրոգրեսի կապակցությամբ կարևորագույն նշանակություն է ստանում աշխատողների որակավորման սիստեմատիկ բարձրացումը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

Գյուղատնտեսության զարգացման և գյուղի հասարակական հարաբերությունների բնագավառում պարտիան գնում է երկու հիմնական խնդիր.

Առաջին՝ հասնել բնակչության համար բարձրորակ սննդամթերքների և արդյունաբերության համար հումքի առատության.

Երկրորդ՝ ապահովել սովետական գյուղի աստիճանաբար անցումը կոմունիստական հասարակական հարաբերությունների և հիմնականում վերացնել տարբերությունը քաղաքի և գյուղի միջև։

Բազմակողմանիորեն զարգացած բարձր մթերատու գյուղատնտեսության ստեղծումը, որն ընդունակ կլինի լիուլի բավարարելու երկրի հարաճուն պահանջմունքները գյուղատնտեսական արտադրանքի ասպարեզում, կխարսխվի նախ և առաջ գյուղատնտեսության բազմակողմանի մեքենայացման ու հետևողական ինտենսիֆիկացման վրա, հողագործության և անասնաբուծության բարձր կուլտուրայի, գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բերքատվության և անասնաբուծության մթերատվության շեշտակի բարձրացման վրա, յուրաքանչյուր հեկտարից ստացվող արտադրանքի ավելացման վրա, միաժամանակ տնտեսելով աշխատանքի ու միջոցների ծախսումը։

Տեխնիկական զինվածությամբ և արտադրության կազմակերպմամբ գյուղատնտեսությունը աստիճանաբար կմոտենա արդյունաբերության մակարդակին։ Այսպիսով, գյուղատնտեսական աշխատանքը կդառնա արդյունաբերական աշխատանքի տարատեսակը. զգալիորեն կպակասի, իսկ հետագայում նվազագույնի կհասնի գյուղատնտեսության կախվածությունը բնության տարերքից։

Արդյունաբերության և գյուղատնտեսության անշեղ վերելքի, բնակարանային և կոմունալ շինարարության ընդարձակման հիման վրա պարտիան Ծրագրի նախագծում սահմանում է սովետական ժողովրդի նյութական բարեկեցության անշեղ բարձրացման կոնկրետ ուղիները։

Ազգային եկամտի ծավալը 20 տարում կավելանա մոտավորապես հինգ անգամ։ Բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող ռեալ եկամուտները այդ ժամանակամիջոցում կաճեն ավելի քան երեք և կես անգամ, համապատասխանորեն կավելանա բնակչության սպառումը։ Իր դրական լուծումը կստանա բնակարանային պրոբլեմը, որը սովետական ժողովրդի բարեկեցության բարձրացման ամենասուր պրոբլեմն է։ Կիրառվելի աշխատանքային ժամանակի հետագա կրճատումը և աշխատանքի պայմանների բարելավումը։

«Սովետական ժողովրդի հերոսական աշխատանքը,—նշվում է Ծրագրի նախագծում,—ստեղծեց հզոր ու բազմակողմանիորեն զարգացած էկոնոմիկա։ Այժմ կան բոլոր հնարավորությունները ամբողջ բնակչության՝ բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի բարեկեցության արագ վերելքի համար։ ՍՄԿՊ-ն համաշխարհային-պատմական նշանակության խնդիր է դնում՝ Սովետական Միության մեջ ապահովել ամենարարձր կենսամակարդակը կապիտալիզմի ամեն մի երկրի համեմատությամբ»։

Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման ձեռք բերված մակարդակը հնարավորություն կընձեռի լիուլի բավարարելու հասարակության և բոլոր քաղաքացիների պահանջմունքները։ Դա հիմք կծառայի սոցիալիստական հասարակության հարաբերությունները աստիճանաբար վերափոխելու կոմունիստական հասարակական հարաբերությունների, հնարավորություն կընձեռի ընդհուպ մոտենալու ըստ պահանջմունքների բաշխելու սկզբունքի իրականացմանը։ Այսպիսով, ՍՍՌՄ-ում հիմնականում կկառուցվի կոմունիստական հասարակարգ։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը համերաշխ եղբայրական ընտանիքում կմասնակցեն Սովետական Միության բոլոր ժողովուրդները, մեր անծայրածիր Հայրենիքի բոլոր ռեսպուբլիկաները ու տնտեսական շրջանները, այդ թվում նաև Սովետական Հայաստանը, մեր ռեսպուբլիկայի աշխատավորները։

Ինչպես նշվում է Ծրագրի նախագծում, Կոմունիստական պարտիան «այսուհետև ևս տնտեսական բնագավառում կվարի սովետական ռեսպուբլիկաների տնտեսության բազմակողմանի զարգացման կուրս. կապահովի արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը և բնական հարստությունների պլանաչափ մշակումը, կկատարելագործի աշխատանքի սոցիալիստական բաժանումը ռեսպուբլիկաների միջև, միավորելով ու համաձայնեցնելով նրանց աշխատանքային ջանքերը, ամբողջ պետության շահերը ճիշտ կզուգակցի յուրաքանչյուր ռեսպուբլիկայի շահերի հետ... Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի

ստեղծումը կպահանջի սովետական ռեսպուբլիկաների ավելի սերտ փոխադարձ կապեր և փոխօգնություն»։

Այն մշտական հոգատարությունը, որ ցուցաբերում են Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը եղբայրական բոլոր ռեսպուբլիկաների էկոնոմիկայի և կուլտուրայի անշեղ զարգացման նկատմամբ, խորապես գիտակցում և զգում է յուրաքանչյուր սովետական քաղաքացի։ Դա կարելի է տեսնել մեր ռեսպուբլիկայի օրինակով, որի աշխատավորները վերջերս նշեցին Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի ստեղծման 40-ամյակը՝ ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման և ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման գործում ձեռք բերած հսկայական նվաճումներով։

Չի կարելի Ծրագրի նախագծից մեջ չբերել սովետական մարդուն հասկանալի և նրա սրտին մոտ այն խոսքերը, որ «...յուրաքանչյուր սովետական ռեսպուբլիկա կարող է ավելի բարգավաճել ու ամրապնդվել ՍՍՌՄ եղբայրական սոցիալիստական ազգերի մեծ ընտանիքում միայն»։

* * *

Յոթնամյա պլանին համապատասխան, հաջողությամբ զարգանում է մեր ռեսպուբլիկայի էկոնոմիկան և կուլտուրան։ Այդ են պերճախոս կերպով վկայում Կենտրոնական վիճակագրական վարչության պարբերական հաղորդագրությունները և մամուլում հրապարակվող փաստաթղթերը։

Սակայն բոլոր բնագավառներում զարգացման ավելի ընդարձակ ծրագիր է նախատեսվում ժողովրդական տնտեսության զարգացման մոտակա 20 տարվա—1961—1980 թվականների հեռանկարային պլանի նախագծով, որի հիմնական դրույթները քննության են առնվել և հավանության են արժանացել Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի կողմից։ Ներկա հոդվածում օգտագործված են այդ պլանի հիմնական տվյալները, որոնք ապագայում ճշտման կենթարկվեն։

Հեռանկարային պլանով նախատեսվել են արդյունաբերության և գյուղատնտեսության աճման, գիտության ու տեխնիկայի զարգացման ու բարգավաճման ավելի բարձր տեմպեր։

Արդյունաբերությունը, որը մեր ռեսպուբլիկայի էկոնոմիկայի առաջատար ճյուղն է, զարգանում է արագ տեմպերով։ Ընթացիկ տարում, յոթնամյակի երրորդ տարում, այն կթողարկի մոտավորապես 40 տոկոսով շատ արտադրանք, քան 1958 թվականին, յոթնամյա պլանով նախատեսված 32,3 տոկոսի դիմաց։

Հայաստանի արդյունաբերության բազմաճյուղ բնույթը խարսխվում է տեղական հանքային հարուստ ռեսուրսների լայն օգտագործման վրա։ Դրանով են պայմանավորված ռեսպուբլիկայի տնտեսական սերտ կապերը Սովետական Միության բոլոր շրջանների հետ և արտադրանքի զանազան տեսակների արտահանության աճը արտասահմանյան շատ երկրներ։

Հայկական ՍՍՌ արդյունաբերության զարգացման պլանի գլխավոր տարբերիչ գծերը առաջիկա 20-ամյակում հանդիսանում են.

1. Արդյունաբերական արտադրության բոլոր ճյուղերի անշեղ զարգացումը և նրա աճման բարձր տեմպերը։

2. Ռեսպուբլիկայի համար արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի և արտադրությունների ստեղծումը.

3. Արդյունաբերական արտադրության մեջ բնական հարստությունների լայն ներգրավումը, հանքային հումքի կոմպլեքսային օգտագործումը։

4. Տնտեսական կապերի հետագա ուժեղացումը ՍՍՌ Միության բոլոր եղբայրական ռեսպուբլիկաների հետ, հաշվի առնելով նախատեսված մասնագիտացումը, դիտելով Անդրկովկասը որպես մեկ ամբողջական միասնական տնտեսական կոմպլեքս։

5. Հաշվի առնելով տնտեսական գործոնները, արդյունաբերական նոր ձեռնարկությունների տեղաբաշխումը նախ և առաջ արդյունաբերական տեսակետից համեմատաբար թույլ զարգացած շրջաններում։

Ինչպես ամբողջ երկրի տնտեսական շրջաններում, այնպես էլ առանձին ռեսպուբլիկաների ներսում արդյունաբերության գնալով ավելի ռացիոնալ տեղաբաշխումը առանձնապես կարևոր նշանակություն է ստանում մեր օրերում, կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում։ Այն ապահովում է հասարակական աշխատանքի տնտեսումը, շրջանների կոմպլեքսային զարգացումը և նրանց տնտեսական զարգացման մակարդակի հավասարեցումը, վերացնում է բնակչության խիստ կուտակվածությունը խոշոր քաղաքներում, նրպաստում է քաղաքի և գյուղի միջև եղած տարբերությունների վերացմանը։

Հեռանկարային պլանի նախագծով նախատեսվում է արդյունաբերական արտադրանքի ծավալը 1980 թվականին, 1960 թվականի մակարդակի համեմատությամբ, ավելացնել մոտավորապես 13 անգամ։

Ինչով են պայմանավորված ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման այդպիսի բարձր տեմպերը, որոնք գերազանցում են ամբողջ երկրի արդյունաբերության աճման միջին տեմպերին։

Դա, անշուշտ, պայմանավորվում է որոշակի տնտեսական գործոններով, այն է՝

1) Ռեսպուբլիկայի բնակչության բարձր խտությամբ և արագ աճով, որն առաջ է գալիս բնակչության ոչ միայն բնական աճից, այլև նրանով, որ նախատեսվում է հայերին արտասահմանից վերադարձնել Սովետական Հայաստան։ Ռեսպուբլիկայի բնակչության թիվը քսան տարում գրեթե կկրկնապատկվի։

Ինչպես հայտնի է, աշխատանքային ռեսուրսները տնտեսական զարգացման գլխավոր գործոններից մեկն են, ուստի նրանց առկայությունը ռեսպուբլիկայում նպաստավոր պայմաններ է ստեղծում ժողովրդական տնտեսության ինտենսիվ աճման համար։

2) Ռեսպուբլիկայի հողային տարածությունների սահմանափակությունը և բնա-կլիմայական պայմանները հնարավորություն չեն տալիս լայնությամբ ընդարձակելու գյուղատնտեսությունը։ Չնայած արտադրության ծավալի զգալի աճին, գյուղատնտեսությունը լրացուցիչ բանվորական ուժի կարիք չի ունենա, նկատի ունենալով գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ու էլեկտրիֆիկացման բարձր աստիճանը, որը կապահովի աշխատանքի արտադրողականության առաջընթաց աճը։

Աշխատունակ բնակչության ավելացող թիվը պետք է օգտագործվի աշխատանքի ոչ գյուղատնտեսական ճյուղերում, իսկ նյութական արտադրության ոլորտում՝ գլխավորապես արդյունաբերության մեջ։

Ելնելով դրանից, արդյունաբերության աճման տեմպերը սահմանվել են այն հաշվով, որպեսզի արտադրության հասարակական պրոցեսում ապահովվի ամբողջ աշխատունակ բնակչության լրիվ ու ռացիոնալ օգտագործումը աշխատանքի արտադրողականության զգալի աճմամբ հանդերձ։

3) Ամենաբազմազան օգտակար հանածոների հարուստ պաշարների առկայությունը ռեսպուբլիկայում, որոնք պետք է ներգրավվեն արդյունաբերական արտադրության մեջ և ի սպաս դրվեն ամբողջ երկրի էկոնոմիկայի զարգացմանը։

Հեռանկարային ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի արդյունաբերության աճման նախատեսվող բարձր տեմպերը հնարավոր են միայն մեր պայմաններում—սոցիալիզմի պայմաններում, որոնք ապահովում են ազգային ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության զարգացումը նրանց տնտեսական պոտենցիալին լիովին համապատասխան։ Դա ամբողջությամբ համապատասխանում է երկրի տնտեսական շրջանների միջև աշխատանքի սոցիալիստական բաժանման վերաբերյալ մեր պարտիայի սկզբունքին և բխում է լենինյան ազգային քաղաքականության բուն էությունից։

Այդ կապակցությամբ տեղին է հիշել ՍՄԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ ընկ. Ն. Ս. Խրուշչովի այն արժեքավոր խորհուրդներն ու ցուցումները, որ նա տվեց ընթացիկ տարում մեր ռեսպուբլիկայում եղած ժամանակ։ Ընկ. Խրուշչովը նշեց, որ Հայաստանի էկոնոմիկայի ապագան արդյունաբերության զարգացման մեջ է, ոչ մի դեպքում չթուլացնելով, իհարկե, մեր ջանքերը գյուղատնտեսության ինտենսիֆիկացման ու աճման գործում։

Արդյունաբերության ներկայիս ճյուղերի արագ աճման հետ միաժամանակ կստեղծվեն ծանր մեքենաշինություն, սև մետալուրգիայի և ավտոմոբիլային արդյունաբերության ձեռնարկություններ, ռադիոտեխնիկական, ապակու-հախճապակու-ճենապակու, բժշկական արդյունաբերություն։ Խոշոր պրոգրեսիվ տեղաշարժեր կկատարվեն արդյունաբերության կառուցվածքում։

Զանազան հանքային հանածոների հսկայական պաշարների առկայությունը ռեսպուբլիկայում հնարավորություն կտա այսուհետև ևս բարձր տեմպերով զարգացնելու գունավոր մետալուրգիան։ Դա լիովին բխում է Ծրագրի նախագծի այն դրվածքից, որ ժամանակ շահելու նպատակով առաջին հերթին պետք է օգտագործել բնական այն հարստությունները, որոնք մատչելի են արագ յուրացման համար և ժողովրդատնտեսական առավել մեծ էֆեկտ են տալիս։

Հայաստանը Սովետական Միության հարուստ շրջաններից մեկն է։ Գունավոր մետաղների արտադրության զարգացման պոտենցիալ հնարավորությունների մասին են պերճախոս կերպով վկայում հետևյալ տվյալները. էֆեկտիվ կերպով տարված որոնման և երկրաբանական-հետախուզական աշխատանքների շնորհիվ պղնձի և մոլիբդենի առ այսօր ստեղծված պաշարները, չնայած արտադրության ամեն տարվա աճմանը, եղած արտադրական կարողությունները կապահովեն ավելի քան հարյուր տարի, իսկ գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների ամորտիզացիոն ժամկետը 20—25 տարի է։ Իսկ չէ՞ որ մեր ռեսպուբլիկայի երկրաբանական պայմանները այնպիսին են, որ ենթադրվում է ոչ միայն պղնձի ու մոլիբդենի, այլև բազմաթիվ այլ գունավոր մետաղների արդյունաբերական պաշարների հետագա ընդարձակումը։

Օրինակ, ալյումինի հումքի պաշարները պրակտիկորեն անսպառ են։ Կան հետախուզված և արդյունաբերական յուրացման համար պատրաստի մագնեզիումի հանքավայրեր։

Հայաստանի ներկայումս մշակվող և շահագործման պատրաստվող հանքավայրերի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք կորզվող հիմնական մետաղների՝ պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի հետ մեկտեղ պարունակում են ավելի քան տասնյակ հազվագյուտ ու ազնիվ մետաղներ՝ վոլֆրամ, ռենիում, սելեն, տելուր, ինդիում, թալիում, գալիում, այդ թվում նաև՝ ոսկի, արծաթ և այլն։ Այդ արժեքավոր էլեմենտները, որոնցից մի քանիսը հիանալի կիսահաղորդիչներ են, դեռևս չեն կորզվում վերամշակվող հանքանյութերից (բացի ոսկուց և արծաթից), բայց ներկայումս գիտահետազոտական աշխատանք է տարվում և կիսագործարանային փորձեր են արվում դրանց արդյունաբերական օգտագործման ուղղությամբ։

Բոլոր այդ և բազմաթիվ մյուս հարստությունները ի սպաս կդրվեն կոմունիզմի կառուցմանը։

Զգալիորեն կընդարձակվեն գործող լեռնահանքային ձեռնարկությունները։

20-ամյակի առաջին տարիներին շարք կմտնեն երեք արդյունաբերական նոր ձեռնարկություններ՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատը և Զոդի ոսկու հանքի ձեռնարկությունը։ Հետագա տարիներին արդյունաբերական արտադրության մեջ կընդգրկվեն գունավոր մետաղների նոր հանքավայրեր՝ Հանքավանի մոլիբդենի, Լիճքի պղնձի և այլ հանքավայրեր։

Զգալիորեն կավելանա պղնձի, մոլիբդենի, ալյումինի, կապարի ու ցինկի ոսկու և արծաթի թողարկումը։ Կկազմակերպվի նոր մետաղների՝ մագնեզիումի և մի շարք հազվագյուտ էլեմենտների արտադրություն, որոնք վճռական նշանակություն ունեն արդի գիտության և տեխնիկայի զարգացման գործում։ Պղնձի, ալյումինի, մագնեզիումի և հազվագյուտ մետաղների բազայի վրա կթողարկվեն զանազան ձուլվածքներ։

Մետաղների արտադրության հարաճուն ծավալները պահանջում են գործող ձեռնարկությունների ընդարձակման հետ մեկտեղ կառուցել պղնձաձուլական և ալյումինի նոր գործարաններ։

Հեռանկարային ժամանակաշրջանում Հայաստանում կդրվեն սև մետալուրգիայի հիմքերը։ Պողպատի հատուկ սորտերի նկատմամբ մեքենաշինության հարաճուն պահանջը կբավարարվի տեղական արտադրությամբ, ռեսպուբլիկայի երկաթի հանքավայրերի բազայի վրա։ Մենք նկատի ունենք ամենից առաջ Հրազդանի և Սվարանցի հանքավայրերը, որոնց գծով ներկայումս հետախուզական աշխատանքներ և տեխնոլոգիական հետազոտություններ են կատարվում։

Լեռնային արդյունաբերությունը՝ մետաղային հանքավայրերի շահագործման հետ մեկտեղ, զարգանալու է նաև ոչ մետաղային օգտակար հանածոների և քիմիական հումքի՝ մարմարի, ագատի, դիատոմիտի, կվարցիտների, բարիտի, հրակայուն հումքերի, հատուկ սորտի կավերի, կրաքարերի, պեռլիտի, աղերի և ժողովրդական տնտեսության զարգացման ճյուղերում կիրառվող այլ նյութերի արդյունահանության գծով։

Այդ բնագավառում կիրառվող միջոցառումներից ուշագրավ են առանձնապես Երևանի կերակրի աղի հանքավայրի, որը Սովետական Միության խո-

շորագույն աղահանքերից մեկն է, շահագործման հանձնելու ուղղությամբ տարվող աշխատանքները։

Աղաբեր ավազանը գտնվում է Երևանի շրջակայքում և քաղաքի տակ, նրա տարածությունը հասնում է մոտ 450 քառակուսի կիլոմետրի, աղի շերտի հզորությունը՝ 150—700 մետրի, միջին հաշվով՝ 240 մետրի։ Բարձր է աղի որակը։ Մոտավորապես նույնպիսի չափերի հասնող աղահանքեր են հայտնաբերվել Հոկտեմբերյանի և Աշտարակի շրջանների սահմաններում։ Այդ երկու ավազաններում քարաղի երկրաբանական պաշարները հաշվվում են 320 միլիարդ տոննա (այժմ ռեսպուբլիկան օգտագործում է ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ տարեկան 110—120 հազար տոննա աղ)։

Դժվար է գնահատել այդ հումքի ժողովրդատնտեսական մեծ նշանակությունը, մասնավորապես քիմիական արդյունաբերության զարգացման համար։ Ռեսպուբլիկայի և հարևան տնտեսական շրջանների աղի կարիքները ապահովելու համար ներկայումս Ավանում կառուցվում է աղահանք և աղամշակման ֆաբրիկա։ Երևանի քիմիական ձեռնարկությունները, որոնք աղ են օգտագործում, աղը կստանան աղաջրի ձևով, որը խողովակներով դուրս կբտարվի անմիջականորեն գետնի տակից։

Առաջին փորձնական հորատանցքը արդեն գործում է Կիրովի անվան գործարանի տերիտորիայում։

Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերության մեջ հատուկ նշանակություն է տրվում հանքային հումքի կոմպլեքսային օգտագործմանը, որովհետև նման մեթոդը տալիս է առավել մեծ տնտեսական էֆեկտ։ Այն հնարավորություն է տալիս կապիտալ ներդրումների փոքր ծավալով, կենդանի և առարկայացված աշխատանքի քիչ ծախսումով և զգալիորեն ավելի ցածր ինքնարժեքով կորզել այն բոլոր օգտակար էլեմենտները, որ պարունակում է հանքային կամ ոչ հանքային հումքը։

Այդ տեսակետից լավ օրինակ են հանդիսանում նեֆելինային սիենիտների կոմպլեքսային արդյունաբերական օգտագործման ուղղությամբ իրականացվող միջոցառումները։ Նեֆելինային սիենիտների բազայի վրա Հրազդանում կառուցվող լեռնաքիմիական կոմբինատը, վերամշակելով և մինչև վերջին էլեմենտը օգտագործելով նեֆելինային սիենիտներն ու կրաքարերը, կթողարկի ոչ միայն կավահող, այլև մի շարք այլ, ոչ պակաս արժեքավոր նյութեր՝ պորտլանդ ցեմենտ, նատրիումի և կալցիումի մետասիլիկատներ, պոտաշ, սպիտակ մուր, «երևանիտ» նոր նյութը և այլն։ Դա կապահովի ձեռնարկության բարձր շահութաբերությունը և թողարկվող արտադրանքների ամենացածր ինքնարժեքը։

Ներկայումս ուսումնասիրվում է և մոտակա 10 տարում իր լուծումը կըստանա տնտեսական մի կարևոր հարց ևս—Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի և մասնավորապես Շորժայի մասսիվի գերհիմքային լեռնապարների կոմպլեքսային օգտագործման հարցը։ Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, այդ լեռնային ապարներից և դրանց հետ կապված մագնեզիալ հումքից կարելի է թողարկել բարձրորակ ֆոսֆորիտային հրակայուն նյութեր՝ մետալուրգիական արդյունաբերության համար, զուգընթացաբար կորզելով լեռնային դանդվածի մեջ պարունակվող քրոմը, նիկելը, կոբալտը, սնդիկը և ազբեստը։

Հայկական ՍՍՌ Սովետական Միության այն շրջաններից է, որտեղ բուռն կերպով զարգանում է «մեծ քիմիան»։ Առաջիկա 20-ամյակում նախատեսվում է ավելի արագ կերպով զարգացնել քիմիական արդյունաբերությունը և, մասնավորապես, սինթետիկ նյութերի արտադրությունը։ Քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալը կավելանա մոտավորապես 25 անգամ։

Արդյունաբերության այդ ճյուղի համար հումքի հիմնական տեսակը կհանդիսանա բնական գազը, ինչպես նաև կերակրի աղը և պղնձաձուլական արդյունաբերության հեռացող ծծմբագազերը։

Մի այնպիսի կարևոր քիմիական նյութ, ինչպիսին է ացետիլենը, այսուհետև ստացվելու է ոչ թե կալցիումի կարբիդից, այլ բնական գազից (մեթանի ջերմաթթվային պիրոլիզի միջոցով)։ Այդ հանգամանքը լայն ասպարեզ կբացի զգալիորեն ավելացնելու սինթետիկ կաուչուկի, կաուստիկ սոդայի, վինիլացետատի և նրանից պատրաստվող արտադրանքների (պոլիվինիլ բուտիրալի, վինիֆլեքսի, պոլիվինիլային սպիրտի) և այլ արժեքավոր նյութերի արտադրությունը, բազա կստեղծի կազմակերպելու նոր արտադրություններ— պոլիքլորվինիլային խեժերի և նրանցից պատրաստվող զանազան արտադրանքների, ացետիլցելյուլոզայի և այդ բազայի վրա ացետատային մետաքսի, պոլիվինիլային սպիրտից պատրաստվող սինթետիկ մանրաթելի արտադրություն և այլն։

Պոլիքլորվինիլային խեժերը արժեքավոր հումք են հանդիսանում։ Այդ հումքի բազայի վրա ռեսպուբլիկայում կստեղծվեն մի շարք նոր արտադրություններ, այն է՝ պլաստիկ մասսաների արտադրություն մեքենաշինության և սարքաշինության կարիքների համար, երեսպատման շինանյութեր բնակարանների ներքին հարդարման համար, սանիտարա-տեխնիկական սարքավորում, տնտեսական և տնային գործածության առարկաներ։

Ռեսպուբլիկայի էկոնոմիկայի համար կարևոր նշանակություն կունենա թողարկվող ապակեթելի և պլաստմասսայի բազայի վրա «Ապակեպլաստ» նոր նյութի արտադրության կազմակերպումը, որը լայնորեն կփոխարինի մեքենաշինության մեջ մետաղին, շինարարության մեջ՝ անտառանյութին և ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում շատ այլ շինվածքների։

Մոտ ժամանակներս շինարարությունը կավարտվի և շարք կմտնեն երկու խոշոր ձեռնարկություն, որից մեկը Երևանում՝ ացետիլցելյուլոզայի արտադրության համար և մյուսը Կիրովականում՝ ացետիլցելյուլոզայից ացետատային մետաքս արտադրելու համար։ Եթե Կիրովականի ացետատային մետաքսի գործարանի ամբողջ արտադրանքը օգտագործելու լինենք ջուլհակագործության համար, ապա նրանից կարելի է արտադրել տասնյակ միլիոնավոր մետր մետաքսե գործվածքեղեն։

Կիրովականի քիմիական կոմբինատում ամոնիակի և ազոտային պարարտանյութերի արտադրության աճմանը խանդարում է այստեղ կիրառվող արտադրության մեթոդի բարձր էներգոտարողությունը։ Ուստի այդ արտադրությունը նույնպես փոխադրվում է բնական գազի, որից կարտադրվի ամոնիակ՝ կոնվերսիայի մեթոդով։ Դա պայմաններ կստեղծի ավելի ցածր ինքնարժեքով թողարկելու ամոնիակային սելիտրա և կազմակերպելու միզանյութի արտադրությունը, որը արժեքավոր պարարտանյութ է և լավ անասնակեր, ինչպես նաև, հումք պլաստմասսաների և ներկերի արտադրության համար։

Ընթացիկ տարում այդ կոմբինատում կյուրացվի դիցիանամիդի և մելամինի արտադրությունը, որը կիրառվում է բարձրորակ պատվածքանյութերի և պլաստմասսաների արտադրության մեջ։ Կավելանա սինթետիկ կորունդի արտադրությունը։

Ռեսպուբլիկայում կստեղծվի քիմիական արդյունաբերության մի նոր խոշոր կենտրոն Հրազդանի շրջանում։ Այստեղ նույն բնական գազի բազայի վրա կազմակերպվում է «վինիլոն» տիպի սինթետիկ մանրաթելի արտադրություն։ Այդ մանրաթելի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները բարձր են, քան վիսկոզի մանրաթելերինը և բամբակինը։ «Վինիլոնը» օգտագործվում է շտապելային մանրաթել և մետաքս պատրաստելու համար։

Երևանի ավազանի կերակրի աղի բազայի վրա նախատեսվում է կազմակերպել կալցիանած սոդայի, սուլֆատ ամոնիումի պարարտանյութի, քլորաջրածնի և նրանից պատրաստվող օրգանական սինթեզի պրոդուկտների արտադրություն։ Այդ նույն բազայի վրա ենթադրվում է ստեղծել կապրոլակտամի՝ կապրոնե մետաքսի և կորդի պատրաստման հումքի արտադրություն։

Քիմիական արդյունաբերության մի այլ ճյուղ, այն է ծծմբաթթվի և պղնձարջասպի արտադրությունը, զարգանալու է պղնձի արտադրությունն ընդլայնելուն և ժողովրդական տնտեսության պահանջին համապատասխան։

Ռեսպուբլիկայում կկառուցվեն դեղագործական ֆաբրիկա, վիտամինի գործարան, որոնք բժշկական գործիքների, սարքավորումների և ռենտգենյան ապարատուրայի նախատեսվող արտադրության հետ մեկտեղ հիմք կդնեն Հայաստանում բժշկական արդյունաբերություն կազմակերպելու համար։

Իսկ որոնք են մեր պլանները էներգետիկայի բնագավառում։

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում հատուկ ուշադրություն է դարձվելու էլեկտրաէներգիայի արտադրության աճմանը։ Այդ նպատակով Երևանում, Կիրովականում, Հրազդանում, Սևանում, Լենինականում կկառուցվեն բնական գազով աշխատող մի շարք ջերմաէլեկտրակայաններ, որոնք վճռական դեր կխաղան ռեսպուբլիկայի էներգետիկ տնտեսության մեջ։ Ինչպես հայտնի է, Երևանի և Կիրովականի ջերմաէլեկտրակայանները արդեն կառուցվում են։ Դրա հետ միասին կշարունակվի հիդրոէլեկտրակայանների կառուցումը Որոտան և Դեբետ գետերի վրա։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա մոտավորապես 13 անգամ։ Դա կապահովի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի էլեկտրիֆիկացումը և այդ հիման վրա՝ աշխատանքի արտադրողականության շեշտակի բարձրացումը, էլեկտրաէներգիայի լայն արմատավորումը բնակչության կենցաղում։

Ռեսպուբլիկայի ջերմա-էներգետիկ բազայի զարգացման գործում կարևոր միջոցառումը կհանդիսանա ժողովրդական տնտեսության հետագա գազիֆիկացումը։ Երևանից հետո գազն ստացվել և օգտագործվում է Արարատում, ընթացիկ տարում կլուծվի Կիրովականի գազամատակարարման հարցը, արդեն սկսվել է և 1962 թվականին կավարտվի մինչև Լենինական հասնող գազամուղի շինարարությունը։ Հետագա տարիներին բնական գազ կմատակարարվի Ալավերդուն, Ստեփանավանին, Զանգեզուրին և մի շարք այլ շրջանների բնակավայրերին։

Առաջին տասնամյակի ընթացքում, մինչև 1970 թվականը, կիրագործվեն բոլոր այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Սևանա լճի ջրերի դարա-

վոր պաշարների արտահոսքը դադարեցնելու համար։ Սևանը կպահվի բարձր ու մշտական մակարդակի վրա, որը մոտ կլինի նրա բնական վիճակին։

Որն է Սևանի պրոբլեմը նոր ձևով լուծելու էությունը։ Եթե ասելու լինենք երկու խոսքով, ապա այն հանգում է հետևյալին. առաջվա պլանով նախատեսվում էր լճի մակարդակը իջեցնել 50 մետրով, լճից տարեկան բաց թողնելով 1200 միլիոն խորանարդ մետր ջուր, լճի մակերեսը կրճատել 7 անգամ և մակերեսի ջրերի գոլորշիացումը խիստ նվազեցնելու միջոցով ավելացնել Սևանա լճից Հրազդան գետով հոսող ջրերի քանակը տարեկան 50 միլիոն խորանարդ մետրից մինչև մոտ 700 միլիոն խորանարդ մետր՝ կասկադի հիդրոէլեկտրակայանները աշխատեցնելու և դաշտերը ոռոգելու համար։

Այժմ մենք հրաժարվել ենք այդ պլանից։ Էլեկտրաէներգիայի նոր աղբյուրների ստեղծումը հնարավորություն կտա 1965 թվականից կրճատել Սևանա լճից բաց թողնվող ջրերի քանակը, այն հասցնելով տարեկան մինչև 500 միլիոն խորանարդ մետրի։ Ջրերի այդ քանակը պահանջվում է ոռոգման համար և եթե մենք չգտնենք մի այլ միջոց նրան փոխարինելու համար, ապա լճի մակարդակի իջեցումը անխուսափելի կլինի և ապագայում, թեպետև ավելի դանդաղ տեմպերով։

Մեր գիտահետազոտական և նախագծային կազմակերպությունների ջանքերով գտնվել է այդպիսի միջոց։ Անհրաժեշտ քանակությամբ ջուրը կապահովի Արփա գետի հոսանքի մի մասը թունելով դեպի Սևան ուղղելու և ստորերկրյա ջրերն ու ջրային մի շարք այլ աղբյուրները օգտագործելու միջոցով։ Սևան փոխադրվող ջրերը, լճի նոր դրությամբ կենցաղային հոսքի հետ միասին, լճից բաց կթողնվեն ոռոգման կարիքների և կարգավորվող էլեկտրաէներգիայի արտադրության համար (Հայկական և Միավորված Անդրկովկասյան էներգոսիստեմների օրական, սեզոնային և բազմամյա կարգավորման համար), սակայն արդեն առանց լճի մակարդակի փոփոխման։ Լիճը կունենա անփոփոխ մակերես, որի տարածությունը լճի սկզբնական, բնական տարածությունից փոքր կլինի միայն 13 տոկոսով։

Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը այդ ուղղությամբ մշակել են համապատասխան միջոցառումներ, որոնք լիակատար հավանության են արժանացել ՍՄԿՊ Կենտկոմի Նախագահության և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի կողմից։ Սույն թվականի օգոստոսի 12-ին ՍՍՌՄ Մինիստրների Սովետը որոշում ընդունեց՝ «Սևանա լճի մակարդակը բնական պայմաններին մոտ նշանակետի վրա պահելու նպատակով Արփա գետի հոսանքի մի մասը դեպի Սևանա լիճ փոխադրելու միջոցառումների մասին»։

Այդ կարևոր որոշումը Հայաստանի էկոնոմիկայի զարգացման և մեր ռեսպուբլիկայի աշխատավորների խորին ցանկությունների բավարարման նկատմամբ պարտիայի և կառավարության մշտական հոգատարության մի նոր դրսևորումն է։

Ինչպես նշվում է ՍՄԿՊ Ծրագրի նախագծում, ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման համար առաջնակարգ նշանակություն ունի մեքենաշինությունը։ Ելնելով դրանից, առաջիկա 20-ամյակում արդյունաբերության այդ կարևոր ճյուղը կաճի դարձյալ շատ բարձր տեմպերով։ Արտադրանքի ծավալը կավելանա մոտավորապես 32 անգամ, իսկ նրա

տեսակարար կշիռը ամբողջ համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում կհասնի մոտ 38 տոկոսի։

Մեքենաշինության զարգացումը, ինչպես և ներկայումս, ընթանալու է գլխավորապես հաստոցաշինության, էլեկտրատեխնիկական արդյունաբերության, սարքաշինության և ավտոմատացման միջոցների արտադրության գծով։

Առավել զարգացում կստանան մեքենաների, հաստոցների և սարքավորումների այն կոնստրուկցիաները, որոնք ունենալով տեխնիկական բարձր հատկություններ, կապահովեն հումքի ու էներգիայի ծախսումների կրճատումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը։ 1980 թվականին հաստոցների թողարկումը կկազմի 54 հազար հատ, 1961 թվականին թողարկվող 6 հազար հատից մի փոքր ավելիի դիմաց։ Կփոխվի ստրուկտուրան՝ բարձր ճշգրտության հաստոցների, ներառյալ ծրագրային կառավարման հաստոցների պրոգրեսիվ խմբերի ավելացման ուղղությամբ։

Արդեն այժմ Երևանում ստեղծվում է մետաղահատ հաստոցների համամիութենական էքսպերիմենտալ գիտահետազոտական ինստիտուտի ֆիլիալ, որը զբաղվելու է ուլտրահնչունային, էլեկտրոիմպուլսային և մանրաճշգրիտ հաստոցների ստեղծման հարցերով՝ ռեսպուբլիկայում դրանց մասսայական արտադրությունը կազմակերպելու համար։

Ռեսպուբլիկայի էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը մեքենաշինության այն ճյուղն է, որը զարգանում է բուռն թափով։ Թողարկվող համախառն արտադրանքի ծավալով այն գրավում է Սովետական Միության մեջ երրորդ տեղը (Ռուսաստանյան ֆեդերացիայից և Սովետական Ուկրաինայից հետո)։

Հայաստանում նպաստավոր տնտեսական պայմաններ են ստեղծվել էլեկտրատեխնիկական արդյունաբերության արագ զարգացման համար։ Մենք նկատի ունենք ամենից առաջ պղնձի, ալյումինի, կաբելեղենի, մեկուսիչ և պլաստմասսային շինվածքների, սարքերի, չափիչ ապարատուրայի արտադրության առկայությունը։ Ռեսպուբլիկայում կան հզոր գիտահետազոտական ու կոնստրուկտորական կազմակերպություններ, բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների որակյալ կադրեր։

Առաջիկա 20-ամյակում թողարկվող արտադրանքի քանակական մեծ աճի հետ մեկտեղ (մոտավորապես 19—20 անգամ) էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ կիրագործվի բոլոր հին սերիայի էլեկտրատեխնիկական շինվածքների փոխարինումը առավել կատարելագործված ու ժամանակակից շինվածքներով և անցում կկատարվի թողարկելու կոմպլեքսային արտադրանք՝ կիսահաղորդիչների, ռելեների և գործարկիչ-կարգավորիչ սարքերի լայն կիրառմամբ։ Արտադրանքի նոր տեսակներից պետք է նշել բարձրավոլտ ապարատուրան, բարձր հաճախականության և ուլտրահնչյունային սարքավորումը։ Կընդլայնվի կուլտուր-կենցաղային և տնտեսական գործածության էլեկտրական սարքերի՝ սառցարանների, էլեկտրական ման լվացողների, սենյակի կոնդիցիոներների արտադրությունը և այլն։

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության գործող ձեռնարկությունների ընդարձակման հետ մեկտեղ կստեղծվեն ավելի քան տասնյակ նոր ձեռնարկություններ։

Սարքաշինությունը, ավտոմատացման միջոցների արտադրությունը և ռադիոտեխնիկական արդյունաբերությունը 20 տարում արտադրանքի ծավալը կավելացնեն ավելի քան 80 անգամ։

Սարքաշինական ձեռնարկությունները աստիճանաբար չափիչ սարքերի և առանձին արտադրական պրոցեսների ավտոմատացման միջոցների արտադրությունից կանցնեն արտադրական պրոցեսների ավտոմատացման կոմպլեքսային միջոցների թողարկմանը՝ ագրեգատների, տեղամասերի և ցեխերի ավտոմատացման համար։ Լայն թավ կստանա էլեկտրոնային հաշվիչ մաթեմատիկական մեքենաների և արտադրական պրոցեսների կառավարման մեքենաների արտադրությունը։

Ռադիոտեխնիկական արդյունաբերությունը, որի սկիզբը մեզ մոտ դրվեց միայն վերջերս, իր հետագա զարգացումը կստանա կիսահաղորդիչային սարքերի և էլեկտրոնա-ճառագայթային խողովակների, ավտոմատ հեռախոսակայանների, ռադիոտեխնիկական ապարատուրայի, ռադիոչափիչ սարքերի, հեռուստացույցների, ռադիոընդունիչների, մագնիտոֆոնների և այլ առարկաների արտադրության մի շարք նոր գործարանների կառուցմամբ։

Ծանր մեքենաշինությունը, որպես այդ բնագավառի նոր ճյուղ, կզարգանա գազատուրբինային սարքերի, մինչև 100 կիլովատանոց դիզելների, ամբարձիչ-տրանսպորտային սարքավորումների, քարի արդյունահանման և վերամշակման մեքենաների, շինարարական ինդուստրիայի համար անհրաժեշտ մեքենաների ու սարքավորումների արտադրության գծով։

Ավտոմոբիլային արդյունաբերությունը կձևակերպվի և ինքնուրույն ճյուղ կդառնա մի շարք նոր արտադրությունների ստեղծման, այդ թվում ավտոբեռնիչների գործարանի, փոքրալիտրաժ մարդատար ավտոմոբիլների գործարանի և այլ ձեռնարկությունների կառուցման շնորհիվ։

Ամբողջ մեքենաշինության մեջ կիրագործվի խոր մասնագիտացում և լայն կոոպերացում։ Հատուկ ստեղծված կոոպերացման գործարանները կմատակարարեն մեքենաշինության բոլոր ճյուղերի ձեռնարկությունների չուգունի, պողպատի և գունավոր մետաղների ձուլվածք, կռանվածք և դրոշմվածք, նորմալացված հանգույցներ ու դետալներ, պլաստմասսայից պատրաստված շինվածքներ, սարքեր, գործարկիչ-կարգավորիչ և կառավարող սարքավորանքներ։

Հաշվի առնելով շինարարության հարաճուն ծավալը, ինչպես նաև հարուստ հումքային ռեսուրսների առկայությունը մեր ռեսպուբլիկայում, 20-ամյա պլանում նախատեսվում է արագորեն զարգացնել շինանյութերի արդյունաբերությունը և շինարարական ինդուստրիան։ Կավելանա բնական շինանյութերի, ցեմենտի, շիֆերի, կերամիկե և ազբոցեմենտային խողովակների, երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրությունը։ Ցեմենտի արտադրությունը Արարատի և Հրազդանի գործարաններում կհասնի 4700 հազար տոննայի։ Կարտադրվեն ջերմամեկուսիչ նյութեր՝ փքուն պեռլիտից, շինվածքներ՝ ձուլված բազալտից, հրակայուն նյութերի նոր տեսակներ։

Մեծ ապագա ունի ապակու և հախճապակու-ճենապակու արդյունաբերությունը։ Տեղական հանքային հումքի և «երևանիտի» բազայի վրա, որն ստացվում է որպես օժանդակ պրոդուկտ կավահողի ստացման համար նեֆելինային սիենիտների վերամշակման ժամանակ, ստեղծվում է զանազան տեսակի ապակետարայի և ապակե շինվածքների՝ հանքային ջրերի, գինու և կոնյակի շշերի,

պահածոյի տուփերի, հայելու և ապակու հատուկ տեսակների, բյուրեղապակու արտադրություն։

Մշակվել և իրագործվում է ժողովրդական սպառման առարկաների արտադրության շեշտակի վերելքի լայն ծրագիր։

Մեր ռեսպուբլիկայում ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը կենտրոնացված է թեթև և սննդի արդյունաբերության մեջ, հիմնականում կահույք և տնային գործածության առարկաներ արտադրող փայտամշակման արդյունաբերության ձեռնարկություններում, ինչպես նաև արդյունաբերության ծանր ճյուղերի առանձին ձեռնարկություններում։

Ռեսպուբլիկայի թեթև արդյունաբերությունը հեռանկարում կզարգանա տեղական գյուղատնտեսական հումքի, ինչպես նաև ռեսպուբլիկայում կազմակերպվող արհեստական ու սինթետիկ մանրաթելերի և այլ նյութերի արտադրության բազայի վրա։ Նախատեսվում է կազմակերպել սինթետիկ հումքից նոր արտադրություններ՝ մորթեղեն-մուշտակեղենի, շղարշի և տեքստիլ-գալանտերային ապրանքների արտադրություն։ Շարք կմտնեն մի շարք նոր ձեռնարկություններ, այդ թվում բամբակի մանարանի ֆաբրիկաներ Լենինականում և Հոկտեմբերյանում, մետաքսի կոմբինատ Սևանում՝ 2000 ջուլհակային հաստոցով, տարեկան 50—55 միլիոն մետր գործվածքեղենի թողարկմամբ, այն դեպքում, երբ ջուլհակային հաստոցների քանակը Շահումյանի գործող կոմբինատում չի անցնում 500-ից։

Արմատապես կվերակառուցվեն և կընդարձակվեն տեքստիլի, տրիկոտաժի, կարի և կոշիկի գործող ֆաբրիկաները։

Արտադրանքի թողարկումը կավելանա և 1980 թվականին կհասնի.

բամբակե գործվածքեղեն 168 միլիոն մետր, 1960 թ. 66 միլիոն մետրի դիմաց.

մետաքսե գործվածքեղեն 100 միլիոն մետր, 1960 թվականի 7 միլիոն մետրի դիմաց.

բրդե գործվածքեղեն 10 միլիոն մետր, 1960 թվականի 4 միլիոն մետրի դիմաց.

տրիկոտաժեղեն 67 միլիոն հատ, 23 միլիոն հատի դիմաց.

կաշվե կոշիկ 11,5 միլիոն զույգ, 1960 թվականի 5,3 միլիոն զույգի դիմաց.

գորգեր և գորգեղեն 6,500 հազար մետր, 1960 թվականի 118 հազար մետրի դիմաց։

Կահույքի արտադրությունը կավելանա 5,5 անգամ։ Եկող տարի կսկսվի Երևանի մարկա ունեցող դաշնամուրների թողարկումը։

Սննդի արդյունաբերությունը բնակչության բարձրորակ սննդամթերքների աճող պահանջմունքը կապահովի գյուղատնտեսական հումքի ավելացման բազայի վրա։ Տասնյակ նոր ձեռնարկությունների կառուցման և գործող ձեռնարկությունների վերակառուցման շնորհիվ մեծ չափով կավելանան մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության, հացաբուլկեղենի և հրուշակեղենի արդյունաբերության, գինեգործության և կոնյակի արտադրության, գարեջրի, ոչ ոգելից խմիչքների և ծխախոտի արդյունաբերության կարողությունները և արտադրանքի թողարկումը։

Ելնելով մեր տնտեսական շրջանի մասնագիտացումից, անշեղորեն կավելանա մրգի և բանջարային պահածոների, գինու և կոնյակի, հանքային ջրերի,

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ծխախոտի, չորացրած և թարմ մրգերի մատակարարումը ընդհանուր միութենական ֆոնդի օգտին։ Այդ նպատակով մեծ չափով կընդլայնվի արտադրությունը, այդ թվում պահածոների արտադրությունը կավելանա հինգ անգամ, խաղողի գինունը՝ ութ անգամ։

Տեղական ռեսուրսների և ներմուծման հաշվին մեծ չափով կավելանա բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող մսի, կաթի և կաթմամթերքների արտադրությունն ու սպառումը։

Հեռանկարային պլաններում սննդամթերքների արտադրության ծավալները նախատեսվել են, ելնելով բնակչության պահանջմունքները գիտականորեն հիմնավորված նորմաների համաձայն լիուլի ապահովելու անհրաժեշտությունից։

Նոր ձեռնարկությունների տեղաբաշխումը արդյունաբերական տեսակետից թույլ զարգացած շրջաններում լիովին արդարացրեց իրեն։ Այսօր արդեն արտադրանք են տալիս կամ կառուցվում են առավելապես մեքենաշինական նոր ձեռնարկություններ Էլարում, Արզնիում, Լուսավանում, Սևանում, Կամոյում, Արթիկում, Մարալիկում, Սպիտակում, Ստեփանավանում, Իջևանում, Գորիսում և այլ շրջաններում։ Այսպիսի գիծ կտարվի և ապագայում։

Առաջիկա 20 տարում կստեղծվեն արդյունաբերական նոր կենտրոններ և քաղաքներ, որոնցից մի քանիսը իրենց բնակչության թվով չեն զիջի այսօրվա Կիրովականին։ Հրազդանը կդառնա ռեսպուբլիկայի ծանր ինդուստրիայի մի նոր կենտրոն, որը ծածկված կլինի գունավոր և սև մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության և շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների ցանցով։

Լուսավանը կդառնա հաստոցաշինարարների քաղաք։ Հայաստանում կստեղծվի նաև էլեկտրոնային հաշվիչ-մաթեմատիկական մեքենաների արտադրության և ռադիոտեխնիկական արդյունաբերության կենտրոն։

Իսկ ի՞նչ պլաններ ունենք գյուղատնտեսության բնագավառում։

Գյուղատնտեսության զարգացումը հեռանկարային ժամանակաշրջանում կընթանա խաղողագործության, պտղաբուծության և անասնաբուծության ասպարեզում ռեսպուբլիկայի հետագա մասնագիտացման ուղղությամբ։ Զգալիորեն կավելանա նաև բանջարեղենի, ծխախոտի, շաքարի ճակնդեղի և խորդենու արտադրությունը։

Արտադրանքի արտադրության աճը կապահովվի գլխավորապես գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասնաբուծության մթերատվության բարձրացման միջոցով, ինչպես նաև գյուղատնտեսական հողատարածությունների մոտավորապես 100 հազար հեկտարով կամ 23 տոկոսով ընդարձակելու միջոցով, որը կատարվելու է հիմնականում խոպան հողերի օգտագործման հաշվին։

1965 թվականից հետո նախատեսվում է հանել բամբակի ցանքերը և ազատվող տարածություններն օգտագործել խաղողի ու պտղատու նոր այգիներ տնկելու և մասամբ էլ բանջարային ու կերային կուլտուրաներ ցանելու համար, որը բխում է Երևանի գոտու շրջանում ինտենսիվ բանջարաբուծություն և կաթնատնտեսություն ստեղծելու անհրաժեշտությունից։

Խաղողի այգիների տարածությունը 1980 թվականին կհասնի 90 հազար հեկտարի՝ 1960 թվականի 31 հազար հեկտարի դիմաց, իսկ պտղատու այգիներինը՝ 58 հազար հեկտարի՝ 28 հազար հեկտարի դիմաց։

Կավելանա խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, ընդ որում կբարելավվի նախրի կառուցվածքը, որի կազմում կբարձրացվի կովերի տեսակարար կշիռը։ Զգալի աճ է նախատեսվում նաև մանր եղջերավոր անասունների, խոզերի և հատկապես թռչունների գլխաքանակի գծով։ Համապատասխանորեն կընդլայնվի կերային կուլտուրաների արտադրությունը և կապահովվի կերի կայուն բազայի ստեղծումը։

20 տարում գյուղատնտեսական հողատարածության 100 հեկտարի դիմաց մսի արտադրությունը (սպանդանոցային քաշով) կավելանա մոտավորապես 2,5 անգամ, կաթինը՝ 2,8 անգամ և բրդինը՝ մոտ 2 անգամ։

Ամենուրեք կիրառվի գյուղատնտեսական արտադրության պրոցեսների բարձր աստիճանի մեքենայացումն ու էլեկտրիֆիկացումը։

Հեռանկարային պլանում կարևոր տեղ է հատկացվում ջրատնտեսական շինարարությանը։ 1980 թվականին ոռոգելի հողերի տարածությունը կավելանա 1,7 անգամ և կհասնի 408 հազար հեկտարի։ Նախատեսվում է ջրարբի դարձնել 500 հազար հեկտար արոտավայր և բարելավել նրանց ջրամատակարարումը։ Ջրատնտեսական միջոցառումների հեռանկարային պլանի կենսագործման շնորհիվ քսանամյակի վերջերին հիմնականում կլուծվեն ռեսպուբլիկայի հողերի ոռոգման և արոտավայրերի ջրամատակարարման հարցերը։

Լիովին կավարտվի Արզնի—Շամիրամի, Թալինի և Կոտայքի ոռոգման սիստեմների շինարարությունը։ Նախատեսվում է կառուցել Որոտանի, Ախուրյանի (աջափնյա) և մի շարք այլ ջրանցքներ, կառուցել Ախուրյանի, Ապարանի և Եղեգնաձորի ջրամբարներ, ինչպես նաև տասնյակ ջրհան կայաններ ռեսպուբլիկայի գրեթե բոլոր շրջաններում։

Ռեսպուբլիկայի էկոնոմիկայի նախատեսվող աճը պահանջում է համապատասխանորեն զարգացնել տրանսպորտի բոլոր տեսակները։ 20-ամյա պլանում նախատեսվում է տրանսպորտի և հատկապես ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման աշխատանքների մեծ ծրագիր, գոյություն ունեցող ավտոմոբիլային ճանապարհների ցանցի արմատական վերակառուցում և նոր ճանապարհների կառուցում։

Ի՞նչ է նախատեսվում երկաթուղային տրանսպորտի բնագավառում։ Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման բարձր տեմպերը պահանջում են ընդարձակել երկաթուղային ցանցը։ Ներկայումս նախագիծ է կազմվում և այս յոթնամյակում կսկսվի Հրազդան—Դիլիջան—Աղստաֆա երկաթուղու շինարարությունը։ Ըստ ընտրած վարիանտի, Հրազդանից մինչև Դիլիջան ընկած հատվածը կանցնի Համզաչիմանով, հատելով Փամբակի լեռնաշղթան և այնտեղից փոքր ճյուղով կմիանա Կիրովականին։ Միայն այդ միջոցառումը Երևանից մինչև Թբիլիսի ձգվող երկաթուղային ճանապարհը կկրճատի 140 կիլոմետրով կամ ավելի քան մեկերրորդով։

Ուսումնասիրվում է հետագա տարիներին ռեսպուբլիկայի էկոնոմիկայի համար մի կարևոր երկաթուղային մագիստրալի կառուցման նպատակահարմարության հարցը, որը Սևանը Բասարգեչարի, Սիսիանի և Տաթևի միջոցով կմիացնի Ղափանին։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության և գյուղատնտեսության, նրա ամբողջ էկոնոմիկայի բուռն աճը կուղեկցվի քաղաքների և գյուղերի բարեկարգման մեծ աշխատանքով, բնակարանային շինարարության չտեսնված ծավա-

լումով և այդ հիման վրա՝ ժողովրդի նյութական բարեկեցության անշեղ բարձրացմամբ։

Գիտությունը և կուլտուրան լայն ու անսահմանափակ ասպարեզ կստանան իրենց զարգացման ու բարգավաճման համար։

Սրանք են համառոտակի այն փայլուն հեռանկարները, որ բաց է անում մեր ռեսպուբլիկայի առջև Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման 20-ամյա պլանը, որը մեր երկրում կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ծրագրի բաղկացուցիչ մասն է։

Ոգեշնչված այդ վեհ ծրագրով, Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, նոր հաջողություններ ձեռք կբերեն մեր սոցիալիստական Հայրենիքի տնտեսական հզորության է՛լ ավելի ամրապնդման գործում։